# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 27.02.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/26-2 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<07>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Թեոֆարմա Իմպորտ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Մակինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 27.02.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/26-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 27.02.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Թեոֆարմա Իմպորտ>> ՍՊԸ
Իրավ. Հասցե՝ ք. Երևան, Դավիթ Բեկի 1 թաղ 5տ.
Գործ. Հասցե՝ Գ. Շերամի 92/3
ՀՎՀՀ 00471216
220513330294000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
shogakat.bagdasaryan@mail.ru
010-72-08-80
Վ. Մակինյան

-----------------------------
(ստորագրություն)